

**ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԱՔԱՆԱԿ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆԸ  
ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՐ. ԷԶՄԻԱԾՆԻ ԹԵՄԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ  
1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.\***

ՀՏԴ 930

DOI: 10.52063/25792652-2023.1.16-33

**ՄԱՐԻԱՍ ՀԱԿՈՒԲՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի  
Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ,

ք. Էքս ան Պրովանս, Ֆրանսիա

[mariam-hakobyan-1010@mail.ru](mailto:mariam-hakobyan-1010@mail.ru)

ORCID: 0009-0003-9569-1624

Սույն հոդվածը, որը ժամանակագրորեն ընդգրկում է 1920-1930-ական թթ-ը, նպատակ ունի լուսաբանելու Եվրոպայի հայաբնակ երկրներում տեղական իշխանությունների կողմից Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի թեմական առաջնորդարաններին տրված արտոնությունները և սահմանափակումները: Մեր առջև խնդիր ենք դրել ներկայացնելու, թե Հայոց ցեղասպանությունից հետո այդ երկրների վերաբերմունքը թեմերի նկատմամբ զարգացման ինչ ընթացք է ունեցել, ինչ նկատառումներից էլնելով են դրանք փոփոխվել, և ինչ ազդեցություն են ունեցել այդ փոփոխությունները համայնքային կյանքի վրա: Պատմագիտության մեջ վերոնշյալ թեմայով դեռևս լուրջ գիտական ուսումնասիրություններ չեն կատարվել: Սա այն շրջանն էր, երբ Խորհրդային Հայաստանի իշխանության կողմից որդեգրված բացահայտ աթեիստական գաղափարախոսության պայմաններում Հայաստանյայց առաքելական եկեղեցին քայքայվում, իսկ սպասավորները բռնաճշունքների զոհ էին դառնում: Ուստի Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Եվրոպայի թեմերի այդ բարդագույն ժամանակաշրջանի գործունեության լուսաբանումը արդիական նշանակություն ունի:

Հետազոտությունը շարադրված է արխիվային փաստաթղթերի, մամուլի, գրականության միջոցով: Բազմաբնույթ, հաճախ միմյանց հակասող նյութերի հավաստիությունը ստուգել ենք՝ կիրառելով պատմաքննական մեթոդաբանություն, իսկ փաստերի համադրման, իրողությունների քննության և համակողմանի ներկայացման համար օգտագործվել է պատմավերլուծական մեթոդաբանությունը:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ թեև տարիների ընթացքում տվյալ երկրների վարչակարգերի հետ կառուցված դրական փոխհարաբերություններին և ընդհանուր հարգանքի և համերաշխության մթնոլորտին, երկրներից յուրաքանչյուրը հստակ ընդգծված վերաբերմունք ուներ թեմերի նկատմամբ, որոնք ամրագրված էին սահմանադրությամբ՝ Էթնիկ փոքրամասնությունների հոգևոր կառույցներին վերաբերող դրույթներով: Դրանք շատ դեպքերում հակասում էին Հայաստանյայց առաքելական եկեղեցու կանոնադրական համակարգին:

**Հիմնաբառեր՝** Հայ գաղթականներ, հայաբնակ երկրներ, թեմական առաջնորդարան, խորհրդային իշխանություն, հայամետ գործիչներ, թեմական կանոնադրություն, հայանպաստ գործունեություն:

\* Հոդվածը ներկայացվել է 29.01.2023թ., գրախոսվել՝ 12.02.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

## Ներածություն

Հայոց ցեղասպանությունից մազապուրծ հայ տարագիրներին Եվրոպական երկրները (Ֆրանսիա, Բուլղարիա, Հունաստան, Ռումինիա և այլն) գրկաբաց ընդունեցին, բայց տարիների ընթացքում, մի շարք գործոններից ելնելով, սրանց վերաբերմունքը փոխվեց:

Հայերը՝ որպես Էթնիկ փոքրամասնություն, պարտավորվեցին ենթարկվել այն երկրի օրենքներին, որտեղ ապրում էին: Հաճախ դա ուղեկցվում էր համայնքային կյանքը գլխավորող թեմական առաջնորդարանների կանոնադրության խախտմամբ: Անշուշտ, այս քաղաքականությունը անհատական բնույթ չէր կրում և կիրառվում էր նաև տեղի մյուս ազգային փոքրամասնությունների դեկավար կառույցների նկատմամբ: Այս պայմաններից ելնելով՝ սփյուռքյան թեմական կանոնադրությունների առանձին դրույթներ հարմարեցվում էին տվյալ երկրի ներքին կանոնադրությանը, ուստի դրանց վերլուծման, թեմական առաջնորդարաններին տրված արտոնություններից և սահմանափակումներից կարող ենք ուրվագծել տվյալ երկրի կառավարող համակարգի վերաբերմունքը տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ, որոնց համախմբող կառույցը թեմական առաջնորդարանն էր:

Թեմական առաջնորդարանների համար լուրջ դժվարություններ էր ստեղծում նաև Հայաստանում խորհրդային իշխանության վարած քաղաքականությունը, քանի որ ընդհանուր վերահսկողության պայմաններում հոգևոր կենտրոն Մայր Աթոռի հետ շփումը գրեթե անհնար էր դարձել: Եվրոպայի հայաբնակ երկրները իրենց հերթին, պետական անվտանգային խնդիրներից ելնելով, դեմ էին այդ հարաբերություններին, քանի որ խորհրդային իշխանությունը կարող էր հեշտությամբ իր ներկայացուցիչների միջոցով վերահսկողություն սահմանել ինչպես թեմերի, այնպես էլ տեղական համայնքների վրա:

## Ֆրանսիական իշխանությունների վերաբերմունքը

1920-1930-ական թվականներին ֆրանսիական իշխանությունները չափազանց դրական էին տրամադրված գաղութահայերի նկատմամբ, և բոլոր ոլորտներում պետական աջակցությունը ակներև էր: Դրանով էր պայմանավորված նաև այն, որ Հայաստանի առաջին հանրապետության անկումից հետո դեկավար այրերի զգալի մասը տեղափոխվեց Փարիզ:

Ֆրանսիական կառավարության առաջին դրական ձեռնարկներից եղավ գործազուրկ և անապաստան ֆրանսահայերին 10 հազար ֆրանկ նպաստի տրամադրումը, ինչը, իսկապես, մեծ աջակցություն էր իրենց գոյությունը մի կերպ պահող վտարանդի հայության համար (Association (ARAM), PASF 1):

Հարկ է նշել, որ ֆրանսիական իշխանությունները չափազանց դրական էին տրամադրված ինչպես Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակության, որի կենտրոնը 1907 թ.-ից Փարիզն էր, այնպես էլ դրա հիմքի վրա վերակազմավորված Եվրոպայի հայոց թեմի նկատմամբ<sup>1</sup>, որը 1927 թ. Գրիգորիս եպս. Պալաքյանի՝ Մարսել հեռանալուց հետո վերածվեց թեմական կազմակերպության (կրոնական ընկերության):

<sup>1</sup> Եվրոպայի հայոց թեմում ընդգրկված էին հետևյալ հայաբնակ երկրները՝ Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան, Գերմանիան, Բելգիան, Չեխոսլովակիան, Ավստրիան, Լեհաստանը, Հարավսլավիան, Շվեյցարիան, Հունգարիան, Իսպանիան, Հոլանդիան:

Ֆրանսիական կառավարության կողմից եկեղեցական իրավունքները հարգելու յուրօրինակ ձև էր վերջինիս վերապահված ֆրանսահայերի ծննդյան, ամուսնական և այլ վկայագրերի տրամադրման թույլտվությունը (ARAM association, PASF 2):

Եվրոպայի հայոց թեմական առաջնորդարանը, իր հերթին, պետական կարևոր ձեռնարկումներում միշտ աջակցում էր կառավարությանը: 1926 թ. Ֆրանսիան ճգնաժամային վիճակից դուրս բերելու կառավարության կոչին առաջին արձագանքողներից մեկը դարձավ Եվրոպայի հայոց կաթողիկոսական պատվիրակ Գրիգորիս եպս. Պալաքյանը, ով, դիմելով տեղի հայ համայնքին, խորհուրդ տվեց մասնակցել այդ գործվիզ գործին՝ հիշեցնելով նրանց 1923 թ. Չմյուռնիայի և Կ. Պոլսի աքսորից հետո ֆրանսիական կառավարության աջակցության մասին: Կաթողիկոսական պատվիրակի կարծիքով՝ սա հիանալի առիթ էր, որ հայությունը իր շնորհակալությունը հայտներ Ֆրանսիայի կառավարությանը (Association (ARAM), PASF 2):

Թեմական պատվիրակը իր աթոռակալման տարիներին կարողացավ դրական հարաբերություններ հաստատել ֆրանսիական բարձրաստիճան այրերի հետ, որոնց թվին էր պատկանում արտաքին գործերի նախարար Արիստիդ Բրիանին, որի շնորհիվ, ինչպես ինքն էր նշում, «բաւ եղաւ զօրացնելու մեր դիրքն ամէն անոնց առջեւ, որոնք կը դժկամակէին ճանչնալ մեր պաշտօնական հեղինակութիւնն հաճախ անհարկի դժուարութիւններ յարուցանելով մեր պաշտօնավարութեան առջեւ»: Գրիգորիս եպս. Պալաքյանը երբեմն դիմում էր Ամենայն հայոց հայրապետին հայասեր ֆրանսիական գործիչներին օրհնաբեր կոնդակներ ուղարկելու խնդրանքով: 1925 թ. այդպիսի մի պատվանշան նա խնդրում է ուղարկել թաղապետ Լուսինէ Պիքառի համար՝ ի նշան հայերի նկատմամբ ցուցաբերած դրական վերաբերմունքի (Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ. 409, ց.1, գ. 5333, թ.14):

Ինչպես արդեն նշեցինք, ֆրանսիական կառավարության դրական վերաբերմունքը նկատելի էր բոլոր ասպարեզներում, ուստի կրթական ոլորտը ևս բացառություն չէր: Ֆրանսիայում ազգային փոքրամասնություններին թույլատրված չէր ազգային ինքնուրույն դպրոցներ բացել, այդ արտոնությունը տրվում էր միայն այն դեպքում, երբ դրանք անմիջականորեն եկթարկվում էին կրթության նախարարությանը կամ եթե ունենում էին ֆրանսիացի տնօրեններ, այնինչ Ֆրանսիայի հայահոծ քաղաքներում հիմնականում Մարսելի թեմական առաջնորդարանի վերահսկողությամբ գործում էին բազմաթիվ ազգային կրթարաններ (մանկապարտեզներ, նախակրթարաններ, դպրոցներ): Հայկական ազգային վարժարանները իրենց գործունեությունը շարունակեցին մինչև 1937 թ.: Ազգային կրթարանների փակման հիմնական պատճառը ձախակողմյան թևի ներկայացուցիչների՝ Ժողովրդական ճակատի իշխանության գալուց հետո ընդունած որոշումն էր, ըստ որի՝ ընտանեկան հատկացումներ ստանալու համար 6 տարեկանից բարձր երեխաների՝ պետական դպրոց հաճախելը պարտադիր է դառնում: Այս որոշումից հետո հայկական դպրոցներում աշակերտների հաճախելիությունը կտրուկ քչանում է, և դրանք փակվում են, իսկ մնացյալ մասն էլ դադարեցնում է իր գործունեությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (Պօղոսեան 220):

Այսպիսով, ընդհանրացնելով կարող ենք եզրակացնել, որ 1920-1930-ական թվականներին ֆրանսիական իշխանությունների վերաբերմունքը ֆրանսահայության և ազգային կառույցների նկատմամբ դրական էր, իսկ Եվրոպայի հայոց թեմի հաստատումից հետո այն իրավական նոր հենք և ազգային կեցության կարևոր հիմնասյուն դարձավ ոչ միայն ֆրանսահայության, այլև թեմում ընդգրկված մյուս սփյուռքյան համայնքների համար:

## Բուլղարական իշխանությունների վերաբերմունքը

Առաջին համաշխարհային պատերազմից հետո բուլղարական կառավարությունը զգուշավոր քաղաքականություն էր վարում ազգային փոքրամասնությունների հանդեպ, ուստի նրանց նկատմամբ կիրառվող սահմանափակումներից (հոգևոր, կրթական և հասարակական-քաղաքական ոլորտներում) զերծ չմնաց նաև բուլղարահայությունը: 1922 թ. սկսած՝ բուլղարահայոց թեմական կառուցվածքները փորձեց վերականգնել համայնքի կրթամշակութային խաթարված կյանքը, սակայն հանդիպեց բուլղար իշխանության արգելքների: Բուլղարական կառավարության սահմանափակումները ամենից նկատելի տարածվեցին ազգային կրթության կազմակերպման վրա: Թեև պատերազմից հետո ազգային դպրոցները լիարժեքորեն սկսեցին գործել, սակայն առաջանորոգվում էին պետության կողմից ընդհանուր պարտադրված կրթական ծրագրով, ըստ որի՝ տարրական դպրոցներում չորս տարիների ընթացքում ուսուցումը օտար լեզվով էր իրականացվում, մինչդեռ ազգային վարժարաններում կրթությունը մայրենի լեզվով պետք է կատարվեր (Ղասաբյան 191-192):

Բուլղարական կառավարությունը խստագույնս հետևում էր բուլղարահայոց թեմական առաջնորդարանի և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հարաբերություններին՝ փորձելով որքան հնարավոր է սահմանափակել այդ շփումը՝ արդյունքում թեմական կարևորագույն հարցերի լուծման իրավունքը կենտրոնացնելով իր ձեռքում: Դրա ամենացայտուն օրինակներից մեկը կաթողիկոսական պատվիրակ Նշանակված Գարեգին Եպս. Խաչատրյանին բուլղար հյուպատոսարանի կողմից մուտքի արտոնություն չտրամադրելն էր, որի հետևանքով նա այդպես էլ չկարողացավ ժամանել Բուլղարիա (Ղայաստանի Ազգային Արխիվ, ֆ. 409, ց. 1, գ. 5087, թ. 47) :

1924 թ. դեկտեմբերի 17-ին Արտաքին գործերի և դավանության նախարարության № 322 հրամանով նախատեսված էր 1925 թ. հունվարի 26-ին բուլղարահայ համայնքում թաղական խորհրդի ընտրություններ անցկացնել, որին կարող էին մասնակցել միայն բուլղարական քաղաքացիություն ունեցող հայերը: Թեև խորհրդահայ պատմաբաններից Մ. Չ. Ղասաբյանը այդ կարգադրության հիմքում կուսակցական միտում էր նկատում և մեղադրում ՀԽՍՀ-ին, սակայն պետք է նշել, որ այն որևէ կուսակցական աղերս չուներ և բխում էր առաջին հերթին բուլղարական կառավարության շահերից (Ղասաբյան 87) :

1926 թ. ցանկության կառավարության տապալումից հետո իշխանության եկավ Լյապչևի կառավարությունը, որից հետո բուլղարահայությանը համայնքային որոշակի ինքնուրույնություն տրվեց, բայց դրա փոխարեն ստեղծվեց ներհամայնքային անկայուն մթնոլորտ, հատկապես նոր թափ առավ կուսակցական պայքարը, որի արդյունքում թեմական խորհուրդների հրավիրումը և ցրումը սովորական երևույթ դարձան: Այնուամենայնիվ, հաստատված ընդհանուր հանդուրժողականության պայմաններում 1932 թ. փետրվարի 29-ին Արտաքին գործերի և դավանության նախարարության № 1935 հրամանագրով թաղական խորհուրդների ընտրություններին թույլատրվեց մասնակցել բուլղարական քաղաքացիություն չունեցող հայերին, այդ թվում՝ նախնայան անձնագրեր ունեցողներին:

1934 թ. մայիսի 19-ին Բուլղարիայում պետական հեղաշրջման արդյունքում իշխանությունը անցավ ֆաշիստական գաղափարախոսության կրողներ «Ռազմական լիգայի» և «Չվեկո» խմբին: Վերջիններս ոչ միայն չեղյալ հայտարարեցին ազգային փոքրամասնություններին, այդ թվում՝ բուլղարահայերին տրված արտոնությունները, այլև խստագույնս սահմանափակեցին դրանք: Առաջին հերթին չեղյալ հայտարարվեցին թաղական խորհուրդների ընտրությունները, իսկ թեմական խորհրդի կազմի հաստատումը վերապահվեց բուլղարական կառավարությանը: Այս պայմաններում 1935 թ. Բուլղարիայի հայոց թեմական առաջնորդարանին չթույլատրվեց նույնիսկ մասնակցություն ունենալ Սբ. Էջմիածնի վերաշինության

համար կազմակերպվող հանգանակությանը, քանի որ պետական թույլտվություն չտրվեց (Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ. 409, ց. 1, գ. 5118, թ. 8): Արդեն 1937 թ. Բուլղարիայում արգելվեց ՀՕԿ-ի մասնաճյուղի գործունեությունը (Ղասաբյան 41-42):

Թեմական խորհուրդը լրջագույնս մտահոգված էր բուլղարահայության համար հավասար աշխատանքային իրավունքների հաստատման և նանսենյան անձնագրերի միջոցով բուլղարական քաղաքացիության ձեռքբերման հարցերով: Ի վերջո, ի թիվս պետական բարձրաստիճան պաշտոնյաներին ուղղված բողոք-նամակների՝ 1935 թ. մարտի 7-ին Բուլղարիայի ներքին գործերի նախարարի կարգադրությամբ դադարեցվեցին նանսենյան քաղաքացիություն ունեցող բուլղարահայության պատումները աշխատանքից: Այս կարգադրությունը մեծ դերակատարություն ունեցավ բուլղարահայության կյանքում, հակառակ դեպքում գործազրկության հետևանքով նրանք կհայտվեին սոցիալական ծանր վիճակում:

Արդեն 1939 թ. հունվարին նախատեսված թաղական խորհուրդների ընտրություններին կարող էին մասնակցել միայն 21 տարին լրացած այն բուլղարահայերը, ովքեր ունեին բուլղարական քաղաքացիություն: Ավնահայտորեն, բուլղարահայ համայնքի տեղական կառավարման մարմինների, այդ թվում՝ թեմական առաջնորդարանի՝ նախկինում տրված որոշակի արտոնությունները սահմանափակվեցին:

Այսպիսով, 1920-1930-ական թվականներին բուլղարական կառավարության հետ հարաբերությունները՝ տարբեր վարչակարգերով պայմանավորված, հաստատուն ընթացք չունեցան: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո մինչև 1934 թ. բուլղարահայ թեմական առաջնորդարանը համեմատաբար ինքնուրույն գործունեություն էր ծավալում, թեև արտաքին հարաբերությունները, մասնավորապես Մայր Աթոռի հետ շփումը պետության կողմից խիստ վերահսկելի էր: Բուլղարահայոց թեմը ներքին կառավարման ինքնուրույնությունից զրկվեց Բուլղարիայում պետական հեղաշրջումից հետո: Թեմը վերածվեց կառավարությունից կախյալ կառույցի, քանի որ երկու կարևոր մարմինների՝ թեմական առաջնորդի ընտրության և թեմական խորհրդի կազմման վերջնական որոշման իրավունքը կենտրոնացրեց իր ձեռքում:

## Ռուսական իշխանությունների վերաբերմունքը

Հայ եկեղեցու ներկայությունը Ռուսինիայում դարերի պատմությունն ունի, հետևաբար հայ-ռուսական փոխհարաբերությունները զարգացման տարբեր փուլեր են անցել: 1859 թ. ռուսական առաջին պետական կազմավորումների՝ Վալախիայի և Մոլդովայի միավորումով ձևավորվեց Ռուսինիա պետությունը: Հայտնի է, որ 18-19-րդ դարերում ռուսական իշխանությունները, մասնավորապես տեղի ուղղափառ եկեղեցին, բացահայտ թշնամական վերաբերմունք են ունեցել Հայաստանյայց առաքելական եկեղեցու նկատմամբ, որի վերաբերյալ կան մի շարք վկայություններ<sup>1</sup>:

<sup>1</sup> Դեռևս 1716 թ. Նոյեմբերի 20-ին Մոլդովայի մետրոպոլիտը իր կրոնական համայնքին ուղղված կոնդակում արգելում է օրթոդոքսներին շփում ունենալ հայերի հետ՝ նշելով, որ նրանք «պիղծ արարածներ են»: Մեկ դար անց՝ 1816 թ., Մոլդովայի և Սուչովայի մետրոպոլիտը գիրք է հրատարակում, որտեղ ռուսինացիներին տարբեր սպառնալիքներով արգելում էր հայերի հետ հարաբերությունների մեջ մտնել: Տեղի հայության և Հայոց դավանանքի նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքը մեղմանում է միայն 1822 թ. սեպտեմբերի 5-ին, երբ ռուսական կայսրությունը իշխանությունը կենտրոնացնում է իրենց ձեռքում: Մոլդովայի և Վալախիայի իշխանության դիվանի նախագահը, որը ազգությամբ ռուս էր, հատուկ հրամանագրով ազդարարում է, որ հայերին մյուս քրիստոնյաներին հավասար իրավունքներ տրամադրվեն, և եկեղեցիներից զինվորականները դուրս բերվեն: 1876 թ. ռուսական սենատը քայլեր է ձեռնարկում ռուսական օրթոդոքս եկեղեցու և Ռուսինիայում գործող կրոնական մյուս համայնքների միջև հարաբերությունների կարգավորման համար, որպեսզի այսուհետև դադարեցվեն կրոնական հակամարտությունները, քանի որ դրանք անդառնալի հետևանքներ

Հայոց եկեղեցու նկատմամբ վերաբերմունքը փոխվեց ավելի ուշ՝ 1920-ական թվականներին, երբ սկսվեց ռուսինահայոց թեմական առաջնորդարանի կազմավորման գործընթացը, որի վերջնակետը դարձավ 1931 թ. հուլիսի 31-ին Կարոլ Բ թագավորի № 2812 արքայական հրովարտակով «Ռուսինահայ թեմական առաջնորդարանի ստեղծման մասին» օրենքը և նույն թվականի նոյեմբերի 25-ին ռուսինական կառավարության կողմից թեմական կանոնադրության վավերացումը («Նոր Արշալոյս», Բուխարեստ, 1931, նոյեմբերի 15):

Թեմական առաջնորդարանը ճանաչելուց բացի Ռուսինիայի թագավորը հանդիսավոր կերպով կատարեց նաև թեմական առաջնորդ Յուսիկ արքեպիսկոպոսի երդմանակալության արարողությունը, որը զուտ պաշտոնական արարողությունն էր : Երդմանակալության տեքստում նորանշանակ թեմական առաջնորդը հավաստեց, որ պթռակավման տարիներին ռուսինական պետական կարգն ու ամբողջությունը վտանգող ձեռնարկներից զերծ կմնա, ավելին՝ «կ'երդնում որ պիտի յարգեմ և իմ ստորադասերուս յարգել պիտի տամ երկրին սահմանադրութիւնը և օրենքները», - նշվում էր երդմանակալության տեքստում: Ռուսինիայի թագավորը, իր հերթին, բավականին տեղեկացված լինելով ռուսինահայերի մասին, նրանց ներկայացնում է որպես աշխատունակ ժողովուրդ:

Այսպիսով, թեմական առաջնորդարանը իրավատեր էր դառնում դարերով պահպանված հայկական եկեղեցիներին և դրանց կալվածքներին: Այս ամենով հանդերձ, ըստ ռուսինական դավանության նախարարության ընդհանուր կանոնադրության 31-րդ և 32-րդ կետերի, նորանշանակ թեմի նկատմամբ որևէ ֆինանսական պարտավորվածություն չէր ստանձնում («Նոր Արշալոյս», Բուխարեստ, 1931, նոյեմբերի 15):

Ռուսինահայ համայնքը մեծ հարգանքի և ուշադրության է արժանանում հայասեր դավանանքի նախարար, այնուհետև վարչապետի պաշտոնը ստանձնած Նիկոլա Յորգայի օրոք (1931-1932 թթ.), որի կառավարման առաջին տարում էլ տեղի ունեցավ ռուսինահայոց թեմի ճանաչումը: Հայերի նկատմամբ ունեցած սիրո և հարգանքի լավագույն դրսևորումը ռուսինահայ համայնքի անցյալին նվիրված նրա պատմական տեղեկագիրն է, որը վերջինս ներկայացրեց խորհրդարան ռուսինահայ թեմին իրավական կարգավիճակ շնորհելու համար: Այս վավերաթղթում մանրամասն ներկայացվում էին նախ հայերի մուտքը Մոլդովա, այնուհետև տարածումը դեպի Բոտոշա, Յաշ և այլուր: Ինչ վերաբերում է թեմական առաջնորդարանի հիմնադրմանը, նա հավելում էր, որ հայերը անցյալում, թեև ոչ պաշտոնական ձևակերպմամբ, իրենց հոգևոր կենտրոնն են ունեցել Սուչավայում, հետևաբար առաջարկում էր գաղթի ճանապարհը հաղթահարած և 1921 թ. Բուխարեստում հոգևոր իշխանություն հաստատած հայ-լուսավորչական (Հայաստանյայց առաքելական) եկեղեցուն իրավական ուժ տալ:

Հայամետ վարչապետի կառավարման ընթացքում զարկ տրվեց Ռուսինայում հայ մշակույթի ճանաչմանը և տարածմանը: Նրա հաջորդ կարևոր ձեռնարկը 1930 թ. հունիսին ռուսինահայ մտավորականների հանձնախմբի առաջարկությամբ և իր անմիջական աջակցությամբ և հովանավորությամբ Բուխարեստում անցկացված Հայ արվեստի ցուցահանդեսն էր (Թարվերդյան), որը մեծ հեղինակություն և հնարավորություններ ստեղծեց նորահաստատ ռուսինահայ թեմի ճանաչման և Հայ ժողովրդի բազմադարյա պատմության ներկայացման տեսանկյունից:

---

կարող են ունենալ երկրի ներքին կյանքի վրա: Օրթոդոքս հոգևորականները պարտավորվում էին հարգանք ցուցաբերել քրիստոնյա այլ դավանանքի ներկայացուցիչների նկատմամբ, չհեզել նրանց կրոնական ծեսերը և այլն (տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ. 862, ց.1, գ. 748, թ. 114):

1932 թ. մարտին կազմակերպվեց «Serata de arta Armeana» անունը կրող հայ արվեստի երեկույթը, որի բացման բարձր պատիվը վերապահվեց Նիկոլա Յորգային և Արշակ Չոպանյանին («Նոր արշալոյս», Բուխարեստ, 1932, մարտի 6):

Ռուսիական կառավարական համակարգում կային նաև ազգությամբ հայ գործիչներ, որոնք, իրենց հերթին, մեծ աջակցություն էին ցուցաբերել ռուսինահայ ազգային-եկեղեցական կյանքի ճանաչման և աջակցման գործում: Այդպիսի անձնավորություններից էր Գրիգոր Թրանքս Յաշը, որը երկար տարիներ վարել էր Կալաքի հայոց եկեղեցու ատենապետի պաշտոնը և մեծ դերակատարում ունեցել տեղի եկեղեցու և համայնքային կյանքում: Այնուհետև նա հիմնադրում է Ռուսիայի աշխատանքի նախարարությունը, և ինքն էլ դառնում առաջին նախարարը: Իր բեղուն գործունեության ընթացքում նա երբևիցե չի թաքցնում իր ազգային պատկանելությունը և մշտապես աջակցում է ռուսինահայ համայնքին: Ռուսինահայ թեմի նկատմամբ տաճած առանձնահատուկ վերաբերմունքի համար թեմական առաջնորդ Յուսիկ արքեպիսկոպոսը անձամբ է դիմում Խորեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսին հայասեր նախարարի ծննդյան 50-ամյա հոբելյանի կապակցությամբ նրան Սբ. Գրիգոր Լուսավորիչ Ա աստիճանի շքանշանով պարգևատրելու համար: Խորեն կաթողիկոսը, ընդունելով այդ առաջարկը, կոնդակ է ուղարկում, իսկ շքանշանը խնդրում պատրաստել տալ Գարեգին արք Յովսեփյանի մոտ, որը այդ ժամանակ գտնվում էր Փարիզում (Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ. 409, ց. 1, գ. 5283, թ. 2):

Ռուսիական պետական այրերի հայամետ դրսևորումները միայն անհատական բնույթ էին կրում: Ինչ վերաբերում է ռուսինահայերի թեմական կանոնադրությանը, այն ընդհանուր առմամբ հարմարեցված էր տեղական պայմաններին և բխում էր Ռուսիայի սահմանադրության և դավանության նախարարության կանոնադրությունից: Առանձնացնենք մի քանի դրույթ, որոնց միջոցով ռուսիական կառավարությունը անուղղակիորեն ազդում էր ռուսինահայ թեմի ներքին կյանքի վրա՝ պահելով նրան կիսանկախ վիճակում: Դավանության նախարարության կանոնադրության 7-րդ հոդվածում ասվում էր, որ որևէ դավանանք չի կարող կախում ունենալ արտասահմանի որևէ եկեղեցական իշխանությունից կամ կազմակերպությունից, բացառությամբ այն կետերի, որոնք բխում էին դավանական և իրավականական սկզբունքներից: Ռուսիայի սահմանադրության 22-րդ հոդվածով էլ սահմանված էր «պետության կողմից բոլոր դավանանքների հավասար ազատության և պաշտպանության երաշխավորումը»: Վերոնշյալ երկու հոդվածների դրույթից բխում էին թեմական կանոնադրության 3-րդ և 4-րդ հոդվածները, ըստ որի՝ ռուսինահայ թեմը թեև ընդունում էր Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի գերագույն հոգևոր իշխանությունը, սակայն թեմի կրոնական, ազգային-մշակութային հաստատությունների գործունեությունը, ինչպես նաև համայնքային գործերը կանոնակարգելու էր ինքնուրույնաբար, որը ամրագրված էր Ռուսիայի ընդհանուր կրոնի նախարարության 1928 թ. ապրիլի 23-ի օրենքի 63-րդ հոդվածով («Նոր Արշալոյս», Բուխարեստ, 1931, նոյեմբերի 15): Այսպիսով, Մայր Աթոռի՝ որպես գերագույն հոգևոր իշխանության ճանաչումը ձևական բնույթ էր կրում: Բացի դրանից, ռուսիական կառավարության կողմից խստագույնս արգելված էր արտասահմանյան փոխանցումները, որ մեծ խնդիրներ էին ստեղծում հատկապես Մայր Աթոռին հանգանակություններ կատարելու ժամանակ<sup>1</sup>:

Վիճարկելի ևս մեկ օրինակ էր 29-րդ հոդվածը, որում ամբողջացված էր այն միտքը, որ թեմական պատգամավորական ժողովի որոշումների վերահսկողությունը պատկանում էր թեմական առաջնորդին, նույնիսկ այն պարագայում, երբ այդ

<sup>1</sup> Որոշ դեպքերում այդ գումարը Մայր Աթոռին էր փոխանցվում անհատների կամ ազգային կառույցների միջոցով (տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ. 409, ց. 1, գ. 5285, թ. 3; գ. 5276, թ. 8-9):

որոշումները կարող էին պետության շահերին վնաս բերել: Մյուս կողմից, թեմական առաջնորդը պարտավոր էր այդ որոշումները մեկ ամսվա ընթացքում ներկայացնել դավանության նախարարությանը վերջնական վճռի համար («Նոր Արշալոյս», Բուխարեստ, 1931, նոյեմբերի 15): Այսպիսով, առաջնորդարանին բավական «այն» լիազորություններ հատկացվելով և օրենքով դրանք ամրագրված լինելով հանդերձ՝ վերջնական վճիռ կայացնելու իրավասությունը պատկանում էր ռումինական բարձրագույն իշխանությանը:

Թեմական կանոնադրության հաստատումից հետո ռումինահայերի շրջանում դժգոհությունների այլք է բարձրանում հատկապես թեմական պատգամավորական ժողովի ընտրման համակարգի վերաբերյալ, ըստ որի՝ ընտրվող անդամները պարտադիր պետք է ռումինական քաղաքացիություն ունենային: Բուխարեստում ռումինահայությունը ստորագրահավաք կազմակերպեց և ներկայացրեց թաղական խորհրդին, բայց ապարդյուն, քանի որ այդ օրենքը ամրագրված էր ռումինական ընդհանուր դավանանքի կանոնադրությամբ (հոդված 10) և տարածվում էր բոլոր ազգային փոքրամասնությունների վրա, ուստի թեմական կառույցները անզոր էին հասնելու դրա վիճարկմանը: Մյուս կողմից, զովելի փաստ էր այն, որ ռումինական քաղաքացիություն չունեցողները զրկված չէին ընտրելու իրավունքից, դա արդեն իսկ մեծ առաջընթաց էր և իր ձևաչափով առաջինը, քանի որ այդ դրույթը ներկայացված չի եղել նույնիսկ ազգային-եկեղեցական կյանքը կարգավորող Ազգային սահմանադրության (1862 թ.), Պոլոժենիայի (1863 թ.), Իրաքի Յայոց կանոնադրության (1930 թ.) մեջ («Նոր Արշալոյս», Բուխարեստ, 1932, փետրվարի 7):

Ռումինական կառավարության թույլտվությամբ ազգային վարժարաններում հիմնական դասավանդման լեզուն հայերենն էր: Մայրենի լեզվից, կրոնից, հայոց պատմությունից բացի հայերեն էին մատուցվում նաև աշխարհագրություն, մաթեմատիկա, բնագիտական առարկաները: Աշակերտները սովորում էին նաև ռումիներեն («Արագ», Բուխարեստ, 1932, մայիսի 29)

Ռումինահայ համայնքը թեմական առաջնորդ Յուսիկ արք. Չոհրաբյանի գլխավորությամբ մի շարք ձեռնարկներով իր նվիրումն ու երախտագիտությունը հայտնեց տեղական իշխանություններին: Դրա ամենացայտուն դրսևորումներից մեկը Երկրորդ համաշխարհային պատերազմի մեկնարկից սկսած սեփական միջոցներով զինվորական հիվանդանոցի հիմնադրումն էր:

Անշուշտ, ռումինահայ թեմական առաջնորդարանի հիմնադրումը պատմական կարևոր նշանակություն էր ռումինահայ համայնքի համար: Թեմի իրավական կարգավիճակի հաստատման և հանրահռչակման տեսանկյունից մեծ նշանակություն ունեցան տեղական գործիչների կողմից կազմակերպված հայանպաստ ձեռնարկները: Այս ամենով հանդերձ՝ թեմական կանոնադրության շատ դրույթներ հարմարեցված էին տեղական օրենքներին և հետևաբար բխում էին պետական շահերից:

### **Յուսիկ արք. Չոհրաբյանի իշխանությունների վերաբերմունքը**

Յուսիկ արք. Չոհրաբյանի կառավարությունը Յայոց ցեղասպանությունից մազապուրծ տասնյակ հազարավոր գաղթականների ընդունեց: Յայամետ վարչապետ Էլեֆթերիոս Վենիզելոսի կառավարման տարիներին (1915 թ.-ից ընդհատումներով մինչև 1932 թ.) հունահայերին զգալի աջակցություն շնորհվեց: 1923 թ. հայ գաղթականներին մեծ արտոնություններով հունական քաղաքացիություն ստանալու թույլտվություն տրվեց: Գաղթականներից շատերը, իրենց նախկին բնակավայրերը վերադառնելու հույսով պայմանավորված, հրաժարվեցին դրանից:

Ցավոք, Յուսիկ արք. Չոհրաբյանի կողմից թեմական առաջնորդարանների մասնատվածության, կուսակցական շերտազատման, ինչպես նաև քաղաքական նպատակներից ելնելով հունական կառավարությունը կտրուկ փոխեց իր վերաբերմունքը հունահայերի նկատմամբ՝ ամեն գնով փորձելով հեռացնել նրանց իր



երկրի սահմաններից: Այդ նպատակով դյուրացվեց նրանց տեղափոխումը դեպի արևմտյան երկրներ և, իհարկե, Խորհրդային Հայաստան (ԽՍՀՄ-ի 35):

Արդեն Թեոդորոս Բանկայոսի (25 հունիսի 1925-19 հուլիսի 1926 թ.) կառավարման առաջին տարիներին օտարներին թույլատրվեց քաղաքացիություն ընդունել ընդհամենը երեք տարով: Այս քայլով հունական կառավարությունը լուծում էր երկու խնդիր. 1-ին՝ բացառում էր ազգային փոքրամասնություններին ամրապնդել իրենց իրավունքները, և 2-րդ՝ նպաստում, որ հետագայում նրանց տեղահանությունը Հունաստանից լրջագույն խնդիրներ չստեղծեր (Յունահայ տարեգիրք 289-290):

Այս շրջանում անկայուն էր նաև տեղական իշխանությունների և երկու թեմերի հարաբերությունը<sup>1</sup>: Թեմերից միայն «Հին Հունաստան և կղզիներ» անունը կրող առաջնորդարանն էր պետության կողմից ճանաչում ստացել: Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի բռնկումը երկու թեմերի իրավական կարգավիճակը վերջնական լուծում չստացավ: Չնայած Մայր Աթոռի բոլոր ջանքերին թեմերը չմիավորվեցին, իսկ հունական իշխանությունը՝ հակառակ բոլոր դիմումներին, հրաժարվեց ճանաչել «Թրակիայի և Մակեդոնիայի» թեմական առաջնորդարանի գոյությունը հաստատող փաստաթուղթը:

Անշուշտ, վարչակարգերի հաճախակի փոփոխումը, պարտադրվող նոր, տարաբնույթ օրենքները սահմանափակում էին թեմերի՝ նախկինում ունեցած գործառույթները՝ վերածելով նրանց զուտ եկեղեցական ծիսակատարություններ անցկացնող կառույցի: Համեմատելով մեր կողմից ուսումնասիրվող շրջանում թեմական առաջնորդարանների կարգավիճակը՝ ընդգծենք, որ համեմատաբար ավելի մեղմ քաղաքականություն էին վարում Ֆրանսիական և ռումինական իշխանությունները: Տեղի թեմական առաջնորդարաններին ներքին կյանքի կազմակերպման գործում որոշակի անկախություն էր շնորհված, ինչը անմիջականորեն ազդում էր համայնքային մյուս ոլորտների, մասնավորապես ազգային կրթության կազմակերպման վրա:

## Եզրակացություն

Ամփոփելով հետազոտությունը՝ կարող ենք փաստել, որ 1920-1930-ական թթ. Եվրոպայի հայաբնակ երկրների կողմից թեմական առաջնորդարանների նկատմամբ վերահսկողությունը իրականացվում էր միաժամանակ երկու ուղղությամբ: Երկրներից յուրաքանչյուրը փորձում էր իրենց սահմանադրությամբ հաստատված դրույթներով թեմերին պահել կիսանկախ վիճակում՝ օգտվելով Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հետ շփման բացակայությունից թեմական կարևոր որոշումների, նույնիսկ թեմական առաջնորդի և թեմական կառույցների անդամների ընտրությունը կենտրոնացնել իրենց ձեռքում:

Այս ամենով հանդերձ՝ թեմական առաջնորդները փորձում էին լավ հարաբերություններ պահպանել տեղական իշխանությունների հետ, հարկ եղած

<sup>1</sup> 1923 թ. Լոզանի պայմանագրից հետո Արևելյան Թրակիայի և Նիկոմեդիայի հայ տարագիրները թեմական առաջնորդ Ստեփանոս արք. Հովակիմյանի առաջնորդությամբ հաստատվում են Սալոնիկում, որի հետևանքով Ետիրեն-Ռոդոսթոյի (Թրակիա) միացյալ առաջնորդարանը վերափոխվում և ստանում է «Թրակիայի և Մակեդոնիայի» առաջնորդարան անվանումը, որի կենտրոնատեղին դառնում է Սալոնիկ քաղաքը: Իզմիրի հոգևորականության հիմնական հատվածը ապաստանում է Աթենքում և ստեղծում «Հին Հունաստան և կղզիներ» անունը կրող առաջնորդարանը, որի կենտրոնատեղին դառնում է Աթենքը: 1926 թ. հունվարի 19-ին Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսի կոնդակի համաձայն թեմերը միավորվում են, և միացյալ թեմերի հոգևոր առաջնորդ է նշանակվում Կարապետ եպս. Մազվյանը, սակայն կուսակցական խնդիրների պատճառով այդ գործընթացը ընդհատվում է (տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ. 409, ց. 1, գ. 5215, թ. 4-5):

դեպքում աջակցել նրանց, քանի որ այդ հարաբերություններից բխում էր ընդհանուր համայնքային կայունությունը:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Արազ, Բուխարեստ, 1932, մայիսի 29, Նուբարյան գրադարան, Արամ Անտոնյանի հավաքածու, հայ գաղութներ-Ռումինիա:
2. Թարվերդյան, Յեթում. *Ռումինահայ համայնքը Նիկոյա Յորգայի ուսումնասիրություններում*, <https://m.mamul.am>, վերջին այց՝ 25. 01. 2023:
3. Խասիոտիս, Իոաննիս. *Պատմական ավանդույթ և քաղաքական իրապաշտություն հունական քաղաքականությունը Հայկական հարցի վերաբերյալ (1876-1996)*. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստ., Երևան, 2012:
4. Հայաստանի Ազգային Արխիվ, *Ֆ. 409, ց. 1, գ. 5333, թ. 14:*
5. --- *Ֆ. 409, ց. 1, գ. 5087, թ. 47, 87:*
6. --- *Ֆ. 409, ց. 1, գ. 5118, թ. 8:*
7. --- *Ֆ. 862, ց. 1, գ. 748, թ. 114:*
8. --- *Ֆ. 409, ց. 1, գ. 5283, թ. 2:*
9. --- *Ֆ. 409, ց. 5276, թ. 8-9:*
10. --- *Ֆ. 409, ց. 1, գ. 5215, թ. 4-5:*
11. Ղասաբյան, Չոհրաբ. *Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության*. ՀԱՍՅ ԳԱ հրատ., Երևան, 1986:
12. *Յունահայ տարեգիրք, Ա տարի*. Նոր օր հրատ., Աթենք, 1927:
13. *Նոր Արշալոյս*, Բուխարեստ, 1931, նոյեմբերի 15, Նուբարյան գրադարան, Արամ Անտոնյանի հավաքածու, հայ գաղութներ-Ռումինիա:
14. *Նոր Արշալոյս*, Բուխարեստ, 1931, նոյեմբերի 29:
15. *Նոր Արշալոյս*, Բուխարեստ, 1932, փետրվարի 7:
16. *Նոր Արշալոյս*, Բուխարեստ, 1932, մարտի 6:
17. Պօղոսեան, Ստեփան. *Թռուցիկ ակնարկ Սարսելյի հայ գաղութի պատմության վրայ*, Երևան, 2005:
18. Association pour la recherche et l'archivage de la mémoire arménienne (ARAM), *Prélature Arméniens sud de la France 1 (PASF 1)*.
19. Association pour la recherche et l'archivage de la mémoire arménienne (ARAM), *Prélature Arméniens sud de la France 2 (PASF 2)*.

**WORKS CITED**

1. Araz, Bowxarest, 1932, mayisi 29, Nowbaryan gradaran, Aram Antonyani havaqac'ow, hay gaghut'ner-R'uminia, [Araz, Bucharest, 1932, May 29, Nubar Library, Aram Antonian collection, Armenian Colonies-Romania]. (in Armenian)
2. Association pour la recherche et l'archivage de la mémoire arménienne (ARAM), *Prélature Arméniens sud de la France 1, (PASF 1)*, [Association for the Research and Archiving of Armenian Memory (ARAM), *Armenian Prelature South of France 1 (APSF 1)*]. (in French) .
3. Association pour la recherche et l'archivage de la mémoire arménienne (ARAM), *Prélature Arméniens sud de la France 2, (PASF 1)*, [Association for the Research and Archiving of Armenian Memory (ARAM), *Armenian Prelature South of France 2 (APSF 2)*]. (in French)
4. Ghasabyan, Zohrab. *Aknarkner bulgharahay hamaynqi patmut'yan*. Erevan, [Essayes of the History of the Bulgarian-Armenian Community. Yerevan] 1986. (in Armenian)

5. Hayastani Azgayin Arxiv, *f.409, c.1, g.5333, t'.14*. [National Archive of Armenia, *f. 409, c. 1, c. 5333, p. 14*]. (in Armenian)
6. --- *f. 409, c. 1, g. 5087, t'. 47, 87*. [f. 409, l. 1, c. 5087, p. 47, 87]. (in Armenian)
7. --- *f. 409, c. 1, g. 5118, t'. 8*. [f. 409, l. 1, c. 5118, p. 8]. (in Armenian)
8. --- *f. 862, c.1, g. 748, t'. 114*. [f. 862, l.1, c. 748, p. 114]. (in Armenian)
9. --- *F.409, c. 1, g.5283, t'. 2*. [f. 409, l. 1, c.5283, p. 2]. (in Armenian)
10. --- *f, 409, g.5276, t'.8-9*. [f. 409, l. 5276, p. 8-9]. (in Armenian)
11. --- *f, 409, g.5215, t'.4-5*. [f. 409, l. 5215, p. 4-5]. (in Armenian)
12. *Nor Arshaloys*, Buxarest, 1931, noyemberi 15, Nubaryan gradaran, Aram Antonyani havaqac'u, hay gaghut'ner-R'uminia, [ *Nor Arshaloys*, Bucharest, 1931, November 15, Nubar Library, Aram Antonian collection, Armenian Colonies –Romania]. (in Armenian)
13. *Nor Arshaloys*, Bowxarest, 1931, noyemberi 29.
14. *Nor Arshaloys*, Bowxarest, 1932, p'etrvari 7.
15. *Nor Arshaloys*, Bowxarest, 1932, marti 6.
16. Po'ghosean, Step'an. *T'r'owcik aknark Marse'yni hay gaghut'i patmut'ean vray*. Erevan, [ *Leaflet Essay on the History of the Armenian Colony of Marseille*] 2005. (in Armenian)
17. T'arverdyan, Het'um. *R'uminahay hamaynqy' Nikola Yorgayi usumnasirut'yunnerum*, [ *The Romanian-Armenian Community in the Studies of Nicola Yorga*. <https://m.mamul.am>. Accessed: 25. 01. 2023] (in Armenian)
18. Xasiotis, Ioannis. *Patmakan avanduyt' & qaghaqakan irapashtut'yun hunakan qaghaqakanut'yuny' Haykakan harci veraberyal (1876-1996)*. Erevan, [ *Historical Tradition and Political Realism Greek Policy Regarding the Armenian Question (1876-1996)*. Yerevan] 2012. (in Armenian)
19. *Yunahay taregirq, A tari*. At'e'nq, [ *Greek-Armenian Yearbook, Year 1*, Athens] 1927. (in Armenian)

## THE ATTITUDE OF THE ARMENIAN POPULATED COUNTRIES OF EUROPE TOWARDS THE DIOCESES OF THE MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN IN THE 1920S-1930S.

**MARIAM HAKOBYAN**

*Yerevan State University, Faculty of History,  
Chair of the History of Armenia, Ph.D. Student,  
city of Aix-en-Provence, France*

This article aims at covering the use of the Mother See of St. Privileges and restrictions given to diocesan prefects of Etchmiadzin from 1920 to 1930. We have set ourselves the task of presenting the development process of the attitude of the those countries towards the dioceses after the Armenian Genocide. More specifically, it is of great significance to explore and define the, reasons for changes and their impact on the community life. In Historiography serious scientific studies on the above subject were not performed yet . This was the period when the Armenian Apostolic Church was disintegrating under the openly atheistic ideology adopted by the government of Soviet Armenia, and the ministers became victims of repression.

The research is based on archival documents, press and literature. The reliability of diverse, often contradictory materials was checked by historical-critical methodology, and historical-analytical methodology was used to compare facts, examine and comprehensively present realities.

As a result of the study, we came to the conclusion that, although over the years an atmosphere of positive relations, respect and solidarity with the regimes of the considered countries was created, each country had a clearly defined relationship with the dioceses, which was enshrined in the constitution, with provisions regarding the spiritual structures of ethnic minorities. In many cases they contradicted the canonical legal system of the Armenian Apostolic Church.

**Key words:** *Armenian emigrants, armenian-inhabited countries, diocesan leadership, Soviet power, pro-armenian figures, diocesan charter, pro-Armenian activities.*

## ОТНОШЕНИЕ АРМЯНОНАСЕЛЁННЫХ СТРАН ЕВРОПЫ К ЕПАРХИЯМ ПЕРВОПРЕСТОЛЬНОГО СВЯТОГО ЭЧМИАДЗИНА 1920-1930 ГГ.

**МАРИАМ АКОПЯН**

*аспирантка кафедры армянской истории факультета истории  
Ереванского государственного университета,  
г. Экс-ан-Прованс, Франция*

Данная статья, хронологически охватывающая 1920-1930 годы, имеет целью осветить привилегии и ограничения, предоставленные резиденциям глав епархий Первопрестольного Святого Эчмиадзина местными властями армянонаселенных стран Европы. Мы поставили перед собой задачу представить процесс развития отношения эти стран к епархиям после Геноцида армян, по каким причинам они были изменены и какое влияние оказали на жизнь общины. В историографии по вышеуказанной теме серьезных научных исследований еще не проводилось. Это был период, когда в условиях открытой атеистической идеологии, проводимой властями Советской Армении, армянская апостольская церковь разваливалась, а церковнослужители становились жертвами репрессий, поэтому в этот непростой период деятельность европейских епархий Первопрестольного Св. Эчмиадзина имеет актуальное значение.

Достоверность различных, часто противоречащих друг другу материалов, была проверена с применением историко-исследовательской методологии, а для сопоставления фактов, изучения реалий и представления всесторонней картины использовалась историко-аналитическая методология.

В результате исследования мы пришли к выводу о том, что, несмотря на позитивные взаимоотношения с режимами данных стран и атмосферу общего уважения и солидарности, каждая из стран имела четко выраженное отношение к епархиям, которые были закреплены положениями Конституции, касающимися духовных структур этнических меньшинств. Во многих случаях они противоречили канонически-правовой системе Армянской Апостольской церкви.

**Ключевые слова:** *Армянские иммигранты, армянонаселенные страны, резиденция главы епархии, Советская власть, проармянские деятели, самоуправление, епархиальный устав, проармянская деятельность.*